

Ատենախոսության բեման հաստատվել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԱԼԹՅԱՆ ԼԵՆԳՐՈՒՇ ԱՐԱՄԻ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
ԽԱՈՒՏՅԱՆ ԱԼԲԵՐՏ ԱՐՄԵՆԱԿԻ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՍԵԼՔՈՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Առաջատար կազմակերպություն՝
պետական մանկավարժական համալսարան

Խ. Աբովյանի անվան հայկական

Պաշտպանությունը կայանալու է 2012 թ. փետրվարի 29-ին, ժամը 14³⁰-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՅ-ի 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ Երևան, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. հունվարի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ԱԼ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2008 թվականի մոսկովյան իր այցի ժամանակ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի անսպասելի ու համարձակ նախաձեռնությամբ նորագույն պատմության մեջ ազդարարվեց հայ-թուրքական փոխհարաբերությունների նոր փուլը, որը հետագայում՝ 2008-ի սեպտեմբերի 6-ին՝ թուրքիայի նախագահ Ա. Գյուլի՝ Երևան ժամանելուց և Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային խաղը դիտելուց հետո, մեր կողմից ստացավ «ֆուտբոլային դիվանագիտություն» անվանումը (այն, ի դեպ, աստիճանաբար մտավ ընդհանուր շրջանառության մեջ): 2008-ի հունիսի 23-ին Ռուսաստանի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ նախագահ Ս. Սարգսյանն իր ելույթում ասաց. «Առաջիկայում ես մտադիր եմ նոր քայլեր ձեռնարկել հայ-թուրքական հարաբերությունները խթանելու ուղղությամբ: Ամենայն հավանականությամբ, ես կիրավիրեմ թուրքիայի նախագահ Աբդուլլա Գյուլին Երևան՝ միասին դիտելու Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլի հավաքականների հանդիպումը»:

Հայ ժամանակակից մամուլում հայ-թուրքական փոխհարաբերությունների քաղաքական, դիվանագիտական, սոցիալ-տնտեսական ու մշակութային ոլորտներում իրադարձությունների սրընթաց զարգացման և հայ-թուրքական փոխհարաբերությունների բազմապիստության արտացոլումն անհրաժեշտություն է դարձնում այդ ամենի գիտական արժևորումն ու համապարփակ ուսումնասիրությունը: Ասել է թե՛ այսօր արդեն հրատապ եմ դարձել շուրջ երեք տարի ընթացող հայ-թուրքական վերոհիշյալ գործընթացների, Հայաստանի անկախացումից ի վեր սկսված և տարբեր ձևերով ու արդյունավետությամբ ընթացող հայ-թուրքական փոխհարաբերությունների հայ ժամանակակից մամուլում արտացոլման գիտական վերլուծություններն ու գնահատությունները, որոնց էլ նվիրված է սույն աշխատանքը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության արդիականությունն ամենից առաջ պայմանավորված է նրանով, որ հայ-թուրքական փոխհարաբերությունների գործընթացն ու դրա արտացոլումը հայ ժամանակակից մամուլում ազդում են Հայաստանի Հանրապետության և հայ հասարակության գործունեության գրեթե բոլոր ոլորտների վրա: Միաժամանակ կարևոր է նշել, որ վերոհիշյալ գործընթացն ավարտված չէ. այն կրում է շարունակական բնույթ և մոտ ապագայում ունենալու է իր տարաբնույթ զարգացումները՝ շարունակելով անմիջապես ներգործել հայ ժողովրդի և հայոց պետության կենսագործունեության ու զարգացման վրա: Հետևաբար, անհրաժեշտ է հայ-թուրքական փոխհարաբերությունների զարգացմանը զուգընթաց կատարել առկա գործընթացների, մասնավորապես՝ մամուլում այդ գործընթացի արտացոլման, գիտական հետազոտություն ու վերլուծություն: Աշխատանքի արդիականությունը դրսևորվում է ինչպես գիտական, այնպես էլ գործնական լրագրության ու քաղաքական հարթությունների վրա:

Հայ-թուրքական «ոչ կոմպենցիոնալ դիվանագիտական» փոխհարաբերությունների մամուլում արտացոլման ուսումնասիրությունն ունի տեսագործնական նշանակություն: Թուրքիան և Հայաստանը միմյանց պաշտոնապես ճանաչել են դեռ 1991-ին, սակայն Թուրքիան հրաժարվում է ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց: Կանադական հայտնի մասնագետ Կ. Հոլթթիի գնահատմամբ՝ միջպետական հարաբերությունների ավելի քան 90

տոկոսը հիմնվում է «պարզապես համոզելու» քաղաքականության վրա¹: Այսպիսով, հայ-թուրքական փոխհարաբերությունները դասվում են այն տիպին, որը կազմում է 10 տոկոսից քիչ դեպքերը, հետևաբար այդ փորձի ուսումնասիրությունը նպաստելու է միջազգային հարաբերությունների՝ այս ոլորտում տեսական դրույթների հստակեցմանը: Բացի այդ՝ «ոչ կոնվենցիոնալ դիվանագիտությունը» Թուրքիայի հետ հարաբերվելու ԶԶ-ի հիմնական եղանակն է, հետևաբար՝ դրա մամուլում արտացոլման հետազոտումը թույլ կտա ավելի արդյունավետ օգտագործել դիվանագիտության այդպիսի մեթոդները և ունի կարևոր կիրառական նշանակություն:

Հայ-թուրքական փոխհարաբերությունների և դրանց՝ հայ ժամանակակից մամուլում արտացոլման տեսական հետազոտությունների կարևորագույն ու դեռևս սակավ ուսումնասիրված ուղղություններից է վերոհիշյալ գործընթացի ազդեցությունը մամուլում հայ-թուրքական փոխհարաբերությունների թեմատիկային անդրադարձման հաճախականության վրա, ինչպես նաև այդ անդրադարձների ուղղվածության հետ կապված առանձին խնդիրների հայեցակարգային պարզաբանումը: Որպես աշխատության տեսական նշանակություն՝ պետք է կարևորել տեղեկատվական պատերազմներ վարելու առաջարկվող հայեցակարգը, ինչպես նաև քաղաքական միջպետական բարդ գործընթացների ընթացքում մամուլի դերի բացահայտումը հասարակության վրա ազդելու տեսակետից:

Աշխատանքում մշակվել են գործնական այնպիսի եզրակացություն-հանձնարարականներ, որոնց կիրառումը ԶԶ ԶԼՄ-ներին, ինչպես նաև պետական ու քաղաքական շրջանակներին հնարավորություն կտա ավելի արդյունավետ հաղթահարել Հայաստանի Հանրապետության առջև ծառայած մարտահրավերները, մասնավորապես՝ հայ-թուրքական փոխհարաբերությունների, տեղեկատվական պատերազմների և տեղեկատվական անվտանգության ոլորտին վերաբերող ռազմավարական ու մարտավարական ծրագրեր մշակելիս:

Ատենախոսությունը գիտագործնական առումով կարող է օգտակար լինել նաև հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների լրագրության ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության մասնագետների համար կազմակերպված ուսուցողական ծրագրերում:

ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության առարկան հայ ժամանակակից մամուլն է (1990-2010): Խնդրո առարկա տարիների ընթացքում, ինչպես նաև այժմ, Հայաստանի մամուլը կարելի է բաժանել երեք խմբերի՝ իշխանամետ (այդ թվում՝ պաշտոնական), չեզոք ու ընդդիմադիր: *Առաջին խմբի* մեջ, որպես ուսումնասիրության հիմնական առարկա ընտրված են ԶԶ-ի պաշտոնական մամուլը՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը, իսկ որպես իշխանամետ մամուլ՝ «Հայոց աշխարհ» օրաթերթը: *Երկրորդ խմբի* մեջ կարելի է դասել մամուլի այնպիսի միջոցներ, որոնք ներկայացնում են ոչ իշխանության և ոչ էլ արմատական ընդդիմության տեսակետները: Այդպիսի մամուլի միջոցներն ավելի ազատ են իրենց գործունեության մեջ, հետևաբար ունեն անաչառության բարձր աստիճան և խնդրին մայում են ավելի լայն տեսանկյունից, թեև նրանցից

¹ St' u Holsti K. J., International Politics: A Framework for Analysis. Sixth Edition, Englewood Cliffs, 1992, 505 p.

յուրաքանչյուրն ունի սեփական մոտեցումները, նախասիրություններն ու խնդրին նայելու ինքնուրույն տեսանկյունը: Ընդհանուր առմամբ, չեզոք մամուլի դասում կարելի է նշել «Իրավունքը», «Ազգը» և «Առավոտը»: Այս խմբի մեջ կարող են լինել նաև այլ թերթեր, սակայն դրանց փոքր տպաքանակն ու սակավ հեղինակությունը թույլ չեն տալիս լրջորեն խոսելու հասարակության վրա դրանց ներգործության մասին: *Երրորդ խմբի* մեջ կարելի է դիտարկել «Զորորդ իշխանություն» և «Հայկական ժամանակ» թերթերը:

Որպես հետազոտության հարակից առարկա՝ պետք է դիտարկել նաև հայաստանյան *ռուսալեզու* մամուլը: Այստեղ հետաքրքրություն են ներկայացնում «Կոնստոնդսկայա պրավդա վ Արմենիի», «Գոլոս Արմենիի», «Նովոյե վրեմյա», «Արզունենտի նեդելի Արմենիի» թերթերը:

Հետազոտության մեկ այլ ենթաառարկա է հայ *Սփյուռքի* ժամանակակից մամուլը: Ընդ որում, Սփյուռքի մամուլը կարելի է խմբավորել *ըստ գաղութների*՝ Ռուսաստան և ԱՊՀ երկրներ, ԱՄՆ, Հարավային Ամերիկա, Եվրոպա, Թուրքիա, Մերձավոր Արևելք: Բացի այդ՝ Սփյուռքի մամուլը կարելի է դասակարգել *ըստ կուսակցական* պատկանելության՝ դաշնակցական, ռամկավարական և անկուսակցական:

Այսպիսով, հետազոտության առարկա են հայ-թուրքական փոխհարաբերությունների միջպետական, դիվանագիտական, քաղաքական, տնտեսական, մշակութային, հասարակական հարթությունների արտացոլումը հայ ժամանակակից մամուլում: Հետազոտությունն իրականացվում է նաև վերոհիշյալ ոլորտների շրջանակներում մամուլում բարձրացվող հարցերի ու շոշափվող թեմաների բազմազանության վերաբերյալ: Մասնավորապես կարևորվում է վերաբերմունքը Հայոց ցեղասպանության, Արևմտյան Հայաստանի, Թուրքիայում հայ ազգային փոքրամասնության իրավունքների, ներկայիս Թուրքիայի տարածքում գտնվող հայ պատմամշակութային հուշարձանների պահպանման թեմաների՝ մամուլում արտացոլման ինտենսիվության դիմամիկան, նյութերի մատուցման տեսանկյունները, ուսումնասիրության աստիճանը:

Ուսումնասիրության առանձին թեմա են հայ-թուրքական փոխհարաբերությունների ընթացքում մամուլի կողմից Հայաստանի Հանրապետության դերի ու նշանակության փոփոխությունների ներկայացումը, ինչպես Հարավկովկասյան տարածաշրջանում, այնպես էլ միջազգային հարաբերությունների համաշխարհային համակարգում:

Կարևորվում է նաև, թե ինչպես է պարբերական մամուլը ներկայացնում Հայաստանի և Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղեմիջոցները:

Հետազոտության անհրաժեշտ առարկա է նաև հայ-թուրքական տեղեկատվական պատերազմը:

Ատենախոսության նպատակներն են.

- հիմնվելով աղբյուրագիտական բազայի և հայ ժամանակակից մամուլի ծավալուն նյութերի վրա՝ համակողմանի ուսումնասիրել վերջինում հայ-թուրքական փոխհարաբերությունների գործընթացի արտացոլման առանձնահատկությունները և վեր հանել դրանց հիմնական օրինաչափությունները.

- մամուլի նյութերի հետազոտության հիման վրա, բացահայտել Հայաստանի հանդեպ Թուրքիայի քաղաքականության նպատակները և դրանց հասնելու մեթոդները, ինչպես նաև գնահատել համաշխարհային նոր համակարգի ձևավորման մեթոդներն ու միտումները.

- գնահատել հայ ժամանակակից մամուլի ազդեցությունը հայ-թուրքական փոխհարաբերությունների գործընթացի հասարակական ընկալման վրա.

- նորոպի մեկնաբանել տեղեկատվական պատերազմների դրսևորումներն ու նշանակությունը միջպետական հարաբերությունների համատեքստում և առաջարկել հայ-թուրքական տեղեկատվական պատերազմում հաղթանակելու հիմնավորված հայեցակարգ:

Այս նպատակներին հասնելու տեսանկյունից հեղինակի կողմից կարևորվել են հետևյալ խնդիրները.

- քննության առնել հայ-թուրքական փոխհարաբերությունների արտացոլումը մամուլում 20-րդ դարասկզբում և 1990-2010թթ. ընթացքում և շեշտադրել դրանցում Թուրքիայի ցեղասպանատեղծ դերն ու էությունը, ինչպես նաև համեմատական վերլուծության ենթարկելով՝ բացահայտել դրանցում ընդհանրություններն ու տարբերությունները.

- առաջարկել ցեղասպանատեղծ պետության հիմնավորված հայեցակարգ.

- ուսումնասիրել մամուլում ներկայացված միջազգային հարաբերությունների նոր համակարգի ձևավորման հատկանիշներն ու առանձնահատկություններն արդի փուլում և դրանցում հայ-թուրքական փոխհարաբերությունների գործընթացի ներգրավվածությունը.

- հետազոտել մամուլի անդրադարձը Հայաստանի և Թուրքիայի արտաքին քաղաքականությանը, միջազգային հարաբերություններին, քաղաքական նպատակներին ու դրանց հասնելու կռվաններին.

- վերլուծել հայ ժամանակակից մամուլի վրա հայ-թուրքական փոխհարաբերությունների գործընթացի ակտիվացման ազդեցության օրինաչափությունները.

- համադրական վերլուծություն կատարել Հայաստանի և Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղենիշների վերաբերյալ պարբերական մամուլի տված մեկնաբանությունների, գնահատականների ու լուսաբանման առանձնահատկությունների առումով.

- բացահայտել հայ-թուրքական փոխհարաբերությունների մեջ հակասական գործընթացները և դրանց արտացոլումը հայ ժամանակակից մամուլում.

- ուսումնասիրել մամուլի դերը հայ-թուրքական փոխհարաբերությունների նկատմամբ հասարակական կարծիքի ձևավորման գործընթացում.

- բացահայտել Սփյուռքի ժամանակակից մամուլի վերաբերմունքը հայ-թուրքական գործընթացին, տարբեր գաղթօջախների մամուլի առանձնահատկությունները, ինչպես նաև Սփյուռքի տարբեր կուսակցությունների մամուլի կողմից հայ-թուրքական գործընթացի լուսաբանման ընդհանրություններն ու տարբերությունները.

- վեր հանել Հայաստանի ժամանակակից մամուլի հայալեզու և ռուսալեզու հատվածների կողմից հայ-թուրքական գործընթացի լուսաբանման առանձնահատկությունները.

- ուսումնասիրել Հայաստանի իշխանամետ, չեզոք և ընդդիմադիր մամուլում հայ-թուրքական փոխհարաբերությունների լուսաբանման ընդհանրություններն ու հակադրությունները,

- բացահայտել արդի փուլում հայ-թուրքական տեղեկատվական պատերազմի հիմնական նպատակները, իրականացման ոճը, մեթոդներն ու գործիքները:

Հետազոտության հեղինակը փորձում է լուծել նաև հետևյալ խնդիրը՝ պարզաբանել՝ ինչ կոնկրետ փոփոխություն է տեղի ունեցել մամուլում հայ-թուրքական փոխհարաբերությունները լուսաբանելու մեջ հսրիդոլային Միության փլուզումից հետո և անկախ Հայաստանի Հանրապետություն հիմնադրելու պայման-

ներում: Եվ պապ ինչ նոր որակ է ձեռք բերել վերոհիշյալ լուսաբանումը, երբ հայ-թուրքական փոխհարաբերությունները պասիվ ու քողարկված փուլից տեղափոխվում են եռանդուն ու անսքող շրջան:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության գիտական նորույթը պայմանավորված է նրանով, որ հայ-թուրքական փոխհարաբերությունները միջպետական, դիվանագիտական, ինչպես նաև հասարակական մակարդակներով նորոպի սկիզբ են առել վերջերս՝ Հայաստանի անկախությունը վերականգնելուց ի վեր և հատկապես ֆուտբոլային դիվանագիտության մեկնարկից հետո: Այդ գործընթացներն իրենց բնույթով արդեն իսկ նորություն են հայ ժամանակակից քաղաքական մտքի, մամուլի և հասարակական ընկալման համար: Հետևաբար, նորագույն պատմության գործընթացների մամուլում արտացոլման ուսումնասիրությունն ու հետազոտումը, հատկապես հայ-թուրքական փոխհարաբերությունների հարթության վրա, կատարված են ոչ բավարար ծավալով և խորությամբ: Ինչպես իրավաճիորեն նշում է թուրքագետ Ռ. Սաֆրաստյանը, հայ-թուրքական փոխհարաբերությունների խնդիրների հետազոտման առումով փաստորեն բացակայում են այնպիսի աշխատանքներ, որոնցում դրանք վերլուծվեին միջազգային հարաբերությունների մասին ժամանակակից գիտության մեջ օգտագործվող հասկացողական ապարատի կիրառմամբ: Բացակայում է նաև հայ-թուրքական միջպետական հարաբերությունների պատմության քիչ թե շատ ամբողջական փաստագրական հետազոտությունը. չխոսելով համալիր մոտեցում պարունակող մեծագրությունների բացակայության մասին՝ մասնագիտացված գրականության մեջ նույնիսկ դրանց առանձին հատվածներ դեռևս չեն ստացել համարժեք արտացոլում՝ «մերկ» փաստագրության տեսանկյունից: Տարածում է գտել մասն այնպիսի մոտեցում, երբ հայ-թուրքական բարդ ու բազմաշերտ խնդիրը դիտարկվում է միայն արցախյան խնդրի հետազոտման համատեքստում²:

Գիտական նորույթի տեսակետից առավելապես կարևորվում են հայ ժամանակակից մամուլում հայ-թուրքական փոխհարաբերությունների վերջին շրջանի արտացոլման ուսումնասիրությունները: Հատկանշական է նաև այն, որ հետազոտությունը կատարվում է ոչ միայն ավարտված, ինչ-որ կայուն հանգրվանի հասցրած երևույթի նկատմամբ, այլև վերլուծվում է հետազոտության ընթացքում շարունակվող գործընթացը: Ավելին, հայ-թուրքական փոխհարաբերությունները հետազոտության փուլում գտնվում են խիստ անկանխատեսելի զարգացումների մեջ: Հետևաբար, հընթացս կատարվող իրադարձությունների մամուլում արտացոլման հետազոտումն ակնհայտորեն նորույթ է, քանի որ մինչ այդ դրանց ուսումնասիրությունը պարզապես հնարավոր չէր: Ինքնին գիտական նորույթ է «ոչ կոնվենցիոն դիվանագիտության» իրականացման մեթոդների և միջոցների վերաբերյալ մամուլի հրապարակումների ուսումնասիրությունը, ուր խոսքը վերաբերում է դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում միջպետական հարաբերությունների ուսումնասիրությանը: Այստեղ հայ-թուրքական հարաբերությունները կարող են հանդիսանալ հիմնական «դեպերից» մեկը, որի հիման վրա կարելի է

² Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Հնարավոր չէ 21-րդ դարում պատմեցներ ստեղծել հարևանների միջև, Երևան, «Զանգակ -97», 2003, 131 էջ:

կատարել տեսական եզրակացություններ ու հարստացնել դիվանագիտական ոչ դասական մեթոդների եւ մամուլում նրանք ներկայացնելու գիմնանոցը:

Հայ-թուրքական փոխհարաբերությունների զարգացման ընթացքին զուգընթաց՝ փոփոխվում են Հայաստանի Հանրապետության դերն ու նշանակությունը ոչ միայն Հարավկովկասյան տարածաշրջանում, այլև համաշխարհային քաղաքականության տեսակետից: Ընդ որում, հայ-թուրքական փոխհարաբերությունները պետք է դիտարկել միջազգային հարաբերությունների նոր համակարգի ձևավորման լույսի ներքո և ընկալել որպես այդ համաշխարհային աշխարհաքաղաքական նոր համակարգի հատված: Բնականաբար, այդ ամենը իր անդրադարձն է ունենում մամուլում:

Թեմայի ուսումնասիրության աստիճանը պայմանավորված է թե՛ ժամանակային լայն շառավղով (1990-2010 թվականներ), թե՛ տեղի ունեցող գործընթացների բարձր ինտենսիվությամբ, թե՛ հայ-թուրքական գործընթացի ոլորտների բազմազանությամբ, թե՛ նշված գործընթացի՝ հայ հասարակական և պետական կյանքի վրա ազդեցության բարձր աստիճանով, թե՛ ուսումնասիրվող մամուլի լայն տեսականիով և թե՛ հարաբերությունների յուրահատկությամբ՝ պայմանավորված Ցեղասպանության գործոնով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Աշխատանքը կատարված է ժուռնալիստական տեսության ուսումնասիրման արդի մեթոդներով ու սկզբունքներով: Այն շարադրել ենք համեմատական, պատմաքննական, համադրական սկզբունքներով՝ փորձելով վեր հանել ուսումնասիրվող նյութի պատճառահետևանքային կապերը, խորքային առեցությունները:

Ատենախոսության համար փաստական հիմք են հանդիսացել ՀՀ զանգվածային լրատվամիջոցների 1990-2010թթ. գործունեության վերաբերյալ առկա նյութերը, ինչպես նաև փորձագիտական կարծիքները, ինտերնետային կայքերում ու պարբերական մամուլում հրատարակված դիտարկումները եւ քննադատական վերլուծությունները:

Հեղինակի կողմից առաջարկվում է այդ անցումների ուսումնասիրության մեթոդաբանությունը, որի հիմքում դրված է հետևյալ մոտեցումը. տարանջատելով հայ ժամանակակից մամուլը տարբեր հատվածների, ըստ դրանց՝ քաղաքական, տարածքային, լեզվական հատկանիշների՝ քննության առնել հայ-թուրքական փոխհարաբերությունների լուսաբանման առանձնահատկություններն առանձին-առանձին: Այնուհետև համադրական վերլուծության մեթոդային հայտերը դրանց միջև գոյություն ունեցող հակասություններն ու ընդհանրությունները: Այսպիսով, հնարավորություն է ստեղծվում գիտական հենքի վրա իրականացնել հայ ժամանակակից մամուլում հայ-թուրքական փոխհարաբերությունների արտացոլման համալիր հետազոտում: Այդ մոտեցումն իրականացվում է մամուլում հետազոտության առարկայի լուսաբանման անաչառության հանգամանքի գնահատմամբ, որը մամուլում գործընթացի արտացոլման կարևորագույն հատկանիշ է: Բացի այդ՝ կիրառվում է մամուլի՝ հասարակության և քաղաքականության վրա ազդելու հանգամանքի ուսումնասիրությունը: Այսպիսով, եթե հաջողվում է հիմնավորել, որ հայ ժամանակակից մամուլում հայ-թուրքական հարաբերություններն արտացոլելիս անկանխակալ ներկայացվում է հայ հասարակության կարծիքը, և որ այդ կարծիքն իր հերթին կրում է մամուլի ազդեցությունը, ապա դա նշանակում է, որ առկա է հայ ժողովրդի՝ ինչպես հայրե-

միջում, այնպես էլ Սփյուռքում, ինչպես հայալեզու, այնպես էլ օտարալեզու, բացարձակ կամքը՝ վերականգնելու պատմական արդարությունը, նպաստելու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը և հայ ժողովրդի օրինական բոլոր իրավունքների իրականացմանը:

Աշխատության մեջ առաջ են քաշվում ու հիմնավորվում նաև մի շարք այլ նոր տեսակետներ, որոնք հայ-թուրքական քաղաքական փոխհարաբերությունների լուսաբանման տեսական հիմնադրույթների ձևավորման համար ունեն կարևոր նշանակություն: Մասնավորապես նշվում է, որ Հայաստանի կողմից նախաձեռնողական քաղաքականությունը շահեկան է ոչ միայն Ցեղասպանության միջազգային ճանաչման ու հայ ժողովրդի իրավունքների վերականգնման դաշտում, այլև հնարավորություն է տալիս նախաձեռնող կողմին ձեռք բերելու լրացուցիչ կովաններ աշխարհաքաղաքական առումով՝ ինչպես իր տարածաշրջանում, այնպես էլ հաշվի առնելով համընդհանրացման գործընթացները համաշխարհային ձևաչափով: Քննության են առնվում նաև տեղեկատվական պատերազմում այն մեթոդները, որոնք կարող են նպաստել ապագայում, հատկապես հայ-թուրքական տեղեկատվական պատերազմում հայկական կողմի գերակշռությանը:

Սույն աշխատության մեջ առաջ է քաշվում ու հիմնավորվում է *ցեղասպանաստեղծ պետության հայեցակարգը*, քննության են առնվում ցեղասպանաստեղծ մտածողության անդրադարձները միջպետական և, մասնավորապես, հայ-թուրքական փոխհարաբերությունների վրա, ինչպես նաև դրանց արտացոլումը ՋԼՄ-ներում: Տեսականորեն հիմնավորվում են ցեղասպանաստեղծ պետության տարբերությունները եվրոպական արժեքային համակարգից, ցույց է տրվում ցեղասպանաստեղծ մտածելակերպի ու եվրոպական արժեհամակարգի հակասական և անհամեմատելի բնույթը հայ-թուրքական փոխհարաբերությունների ներհակ գործընթացների օրինակով:

Աշխատության մեջ բացահայտված ցեղասպանաստեղծության գործոնն ունի խիստ այժմեական նշանակություն և պետք է հաշվի առնվի Հայաստանի Հանրապետության՝ Թուրքիայի հետ փոխհարաբերությունները ձևավորելու եւ դրանք լուսաբանելու ընթացքում:

ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ արծարծված հիմնախնդիրները, կարևոր դրույթներն ու եզրակացությունները հրատարակվել են ՀՀ տարբեր պարբերականներում ու գիտական ժողովածուներում, ներկայացվել են Հայաստանում կազմակերպված հանրապետական և միջազգային գիտագործնական գիտաժողովներում:

Ատենախոսությունը քննարկվել է հրատարակային պաշտպանության է երաշխավորվել Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի ժուռնալիստիկայի ու բանասիրության ֆակուլտետի ժուռնալիստիկայի տեսության և պատմության ու պրակտիկ ժուռնալիստիկայի ամբիոններում:

Առանձին հարցեր նախապես քննարկվել են տեղեկատվության անվտանգության հայ և արտասահմանցի մասնագետների և հետազոտողների հետ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, համապատասխան տրոհումներ պարունակող երկու գլուխներից, եզրակացություններից և գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը, արդիականությունը, պարզաբանվում են հետազոտության նպատակն ու խնդիրները: Ներկայացվում են աշխատանքի մեթոդաբանական հիմքերը, տեսագործական նշանակությունը և գիտական նորույթը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐՁ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Առեմախոսության այս գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնց մեջ ներկայացվել են աշխարհաքաղաքական նոր դաշտի ձևավորման պայմաններում Հայաստանի և ՀՀ զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը, գարգացման ընթացքն ու միտումները:

Ենթագլուխ 1

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ՀԱՄԱՎԱՐԳԻ ՁԵՎՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՆՁՆԱԿՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ (Ըստ հայկական և համաշխարհային մամուլի)

Վերջին երկու տասնամյակների ընթացքում՝ այն բանից հետո, երբ կործանվեցին Վարշավյան պայմանագրի կազմակերպությունն ու ՏՃտեսական փոխօգնության խորհուրդը, որոնք Խորհրդային Միության շուրջ ստեղծված ռազմական և տնտեսական դաշինքներ էին, և ապա բուն Խորհրդային Միության փլուզումից հետո աշխարհն ստացավ ընդհանրապես համաշխարհային նոր համակարգ, որը ունեցավ միաբեռն տեսք:

Մեր հետազոտությունները ցույց են տվել, որ, այնուամենայնիվ, անցած երկու տասնամյակի ընթացքում Ռուսաստանը նախածեռնեց մի շարք քայլեր՝ իր քաղաքական, ռազմական ու տնտեսական հզորությունը և հետխորհրդային տարածքում ազդեցությունը պահպանելու և վերականգնելու նպատակներով: Այդպիսի նախածեռնությունների շարքում է ԱՊՀ երկրների համագործակցության ձևաչափը, այնուհետև՝ ՀԱՊԿ ռազմական դաշինքը, Եվրագես տնտեսական դաշինքը, Ռուսաստան-Բելառուս միութենական պետության ստեղծումը, ռուսական ռազմական հենակայանների տեղաբաշխումը Հայաստանում, Ղրիմում, Բելառուսում, Ղրղզստանում, Աբխազիայում, Հարավային Օսեթիայում, ինչպես նաև՝ Ադրբեջանում Ղարաբաղի ռազմագիտակայանի պահպանումը: Բնականաբար, այդ ամենը իր արտացոլումը ունեցավ ժամանակակից հայ մամուլում:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշխարհը նորից վերադառնում է բազմաբևեռության, և բևեռներից մեկը ձևավորվում է Ռուսաստանի շուրջ: Աշխատանքում ուսումնասիրվում են մամուլի անդրադարձները Ռուսաստան-ՆԱՏՕ, ՌԴ-ԱՄՆ, ՌԴ փոխարարաբերություններին, ինչպես նաև վերոհիշյալ համաշխարհային դերակատարների աշխարհաքաղաքական գործողություններին ինչպես մեր տարածաշրջանում, այնպես էլ Մերձավոր Արևելքում, Աֆղանստանում, Իրանում և այլն: Ուշադրություն է դարձվում նաև մամուլի անդրադարձներին, համաշխարհային տնտեսական ճգնաժամին, դրա հետևանքներին ու ազդեցությանը համաշխարհային քաղաքական գործընթացների վրա: Աշխարհի առաջատար պետությունների ղեկավարները նշում են, որ տնտեսական ճգնաժամի հետևանքով առաջացած տնտեսական

մոդելների փոփոխությունն անդառնալի է: Հանդես գալով պետերբուրգյան միջազգային տնտեսական ֆորումում՝ ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևը հայտարարեց, որ «աշխարհում լիբերալիզմը փոխարինվել է չափավոր, իսկ երբեմն ոչ այնքան չափավոր պրոտեկցիանիզմով»³: ՌԴ-ի, Ղազախստանի և մի շարք պետությունների ղեկավարներ շեշտում են, որ համաշխարհային տնտեսական նոր աշխարհակարգը պետք է հիմնադրվի մի շարք պետությունների կողմից, և համահիմնադիրների ցանկում պետք է լինի նաև Ռուսաստանը: Նույնը վերաբերում է նաև աշխարհի քաղաքական առաջնորդությանը, որը, ըստ ՌԴ նախագահի, նույնպես պետք է լինի կոլեկտիվ:

Այս գլխի երկրորդ մասը («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՐՁ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՎԱՐԳՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՑՈՒԼՈՒՄԸ ՀՀ ՊԱՐԲԵՐՎԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ») նվիրված է արագ փոփոխվող աշխարհում Հայաստանի դերի բացահայտմանը և ՀՀ մամուլի կողմից դրա ներկայացմանը: Ուսումնասիրվում է մամուլի անդրադարձը հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հակամարտությունների էությանը, դասակարգվում են այդ հակամարտություններում գոյություն ունեցող հարցերը: Ներկայացվում են ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի առաջարկվող լուծումները, որտեղ նա առաջ է քաշում տարածաշրջանի համար «ընդհանուր հորիզոնի տրամաբանությունը». «Ես հույս ունեմ, որ մի օր մեր հարևանների և բարեկամների հետ իրական ու գործնական երկխոսություն կսկսենք՝ մեկ սեղանի շուրջ հավաքելով բոլորին. դա է պահանջում ընդհանուր հորիզոնի տրամաբանությունը: Ես վստահ եմ, որ գալու է այն օրը, երբ այն հարցադրմանը, թե հնարավոր է դա մեր տարածաշրջանում, կլսենք հստակ պատասխան՝ այո»⁴:

Հասկանալի է, որ մինչ ընդհանուր հորիզոնի տեսլականին հասնելը Հայաստանը պետք է դիմակայի եղած մարտահրավերներին և դուրս գա հաղթող մեր հանդեպ թշնամաբար տրամադրված երկրների հետ մենամարտում ու Հայաստանի հետ ոչ թշնամական հարաբերություններ ունեցող երկրների հետ մրցույթում: Այս գործընթացում, ըստ հայ ժամանակակից մամուլի, Հայաստանը պետք է ամրապնդի իր տեղը միջազգային քաղաքականության համակարգում և հատկապես Հարավային Կովկասի տարածաշրջանում:

Ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության անվտանգության համակարգը, որը հիմնված է Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերության ու ՀԱՊԿ-ի գոյության վրա, ինչպես նաև ուշադրություն է դարձվել Հայաստան-ՆԱՏՕ, Հայաստան-Եվրամիություն, Հայաստան-խլամական աշխարհի հարաբերություններին: Քննարկվել են Թուրքիայի պանթուրքիստական ծավալապաշտական ծրագրերը, թուրք-ադրբեջանական, թուրք-միջինասիական փոխհարաբերությունները:

Անդրադառնալով Հայաստանի վարած նախածեռնողական քաղաքականությանը՝ մամուլում նշվել է, որ դրա շնորհիվ Հայաստանը դուրս է եկել աշխարհաքաղաքական նոր մակարդակի վրա: Ինչպես մամուլում նշում է հայտնի քաղաքագետ, ԱՄՆ անվտանգության ինստիտուտի ռուսաստանյան եւ ասիական ծրագրերի տնօրեն Ն. Ջլոբինը՝ «Այն ամենը, ինչ այսօր կատարվում է Հայաստանում, մասնավորապես Թուրքիայի հետ հարաբերություններում, ինձ թվում է՝ ֆանտաստիկ շահավետ է և լավ կողմից տարանջատում է հայկական

³ Դմիտրի Մեդվեդևի ելույթը Պետերբուրգյան միջազգային տնտեսական ֆորումում, «Նովոստի Արմենիա», 18 հունիսի, 2010:

⁴ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Գերմանիայի Կոնրադ Ադենաուերի հիմնադրամում, 23 հունիսի, 2010:

քաղաքական էլիտան հարևան վրացականից ու այս կամ այն չափով ետխորհրդային ամբողջ էլիտայից... Այն, ինչ հիմա կատարվում է, դա Հայաստանի փորձն է մտնել «մեծ տղաների» խաղի մեջ, մտնել մեծ խաղադաշտ... Սա հաջողության հնարավորություն է Հայաստանի համար, որը թույլ կտա նրան տալու ևս մեկ՝ գուցե այսօրվանից ավելի լավ հնարավորություններ գրավել գլոբալ աշխարհի մեջ»⁵։ Աշխատության մեջ ուսումնասիրվում է նաև մամուլի անդրադարձը Հայաստանի մախաձեռնողական քաղաքականության քրդական գործոնի ազդեցությունը վրա, ինչպես նաև անմիջապես Թուրքիայի ներսում քաղաքական փոփոխությունների առումով։ Միաժամանակ վեր են հանվում հայ-թուրքական սահմանի բացման սպասումով սկիզբ առած գործընթացները Իրանում, Կրաստանում և Ադրբեջանում։ Նշվում է նաև, որ ՀՀ մախաձեռնողական քաղաքականությունը խթանել է Սփյուռք-Հայաստան կապերի ակտիվացումը ու Սփյուռքում հայապահպան ու հայամասսո ալիքի բարձրացումը։

Այս գլխի երրորդ բաժինը կոչվում է՝ «ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԶԱՆՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (համադրական վերլուծություն)»։ Այստեղ վերլուծվում է հայկական մամուլի վերաբերմունքը Թուրքիային 20-րդ դարասկզբի, խորհրդային կարգերի ժամանակահատվածներում, ինչպես նաև՝ սկսած արցախյան շարժումից և ապա՝ Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո։ Ընդ որում, ուսումնասիրվում են ինչպես պաշտոնական ու իշխանամետ մամուլը, այնպես էլ չեզոք և ընդդիմադիր լրատվամիջոցները։ Համադրություն է կատարվում Հայաստանի հայալեզու և ռուսալեզու մամուլի միջև։ Այնուհետև առանձնակի ուշադրությամբ ուսումնասիրվում են 1990-2010թթ. ընթացքում հայ-թուրքական հարաբերությունների՝ Հայաստանի մամուլում արտացոլման ոճը, հաճախականությունն ու թեմատիկան։ Այդ ժամանակագրական հատվածը բաժանվում է երեք հատվածի՝ Հայաստանի անկախության հռչակման ժամանակահատված (1990-1992), Հայաստանի Հանրապետության կայացման ժամանակաշրջան (1993-2007) և մախաձեռնողական արտաքին քաղաքականության ու ֆուտբոլային դիվանագիտության ժամանակահատված (2008-2010)։ Նշվում է, որ մամուլում գերակշռում է երկու տեսակետ՝ լիբերալ ապագայի մտքերի ու ազգային պահպանողականների։ Այս վերլուծվում է, թե հատկապես մամուլի որ միջոցներն ինչպես են ներկայացնում վերոհիշյալ երկու գաղափարախոսությունների բախումը։ Ուսումնասիրվում է նաև հայ մամուլի վերաբերմունքը հայ-թուրքական փոխհարաբերությունների վերջին շրջանին, որը բնորոշվում է որպես ֆուտբոլային դիվանագիտություն։ Անդրադարձ է կատարվում, թե հայ-թուրքական փոխհարաբերությունների լուսաբանման մեջ հատկապես որ մամուլի միջոցները որ թեմաներն են բարձրացնում և ինչ կերպ։

Ուսումնասիրության համար հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Սփյուռքի մամուլի անդրադարձը հայ-թուրքական փոխհարաբերություններին։ Նշվում է, որ վերոհիշյալ գործընթացներին Սփյուռքի մամուլի կողմ և դեմ լինելը մեծ մասամբ կախված է հետևյալ համագամայնքներից՝

1. մամուլի կուսակցական պատկանելիությունից.
2. մամուլի միջոցի գտնվելու վայրի (երկրի) իշխանությունների հայ-թուրքական հարաբերությունների հանդեպ դիրքորոշումից.
3. տվյալ համայնքի կառուցվածքից, Հայաստանի ազդեցության չափից։

⁵ «Արգունների ցանկ» N 41 (179), 20 հոկտեմբեր 2009:

Ուսումնասիրվում են տարբեր համայնքների մամուլի միջոցները և նշվում, որ Սփյուռքի մամուլում վերաբերմունքը վերոհիշյալ խնդրին, ինչպես նաև անդրադառնալու հաճախականությունը կախված են նաև հայ-թուրքական փոխհարաբերություններում տեղի ունեցող մի շարք կոնկրետ քայլերից։ Նշվում է, որ հայ-թուրքական փոխհարաբերությունների մամուլում արտացոլման օբյեկտիվությունը հիմնականում պահպանվում է։ Մամուլը մեծ մասամբ օբյեկտիվորեն արտահայտում է հասարակության մեջ ընթացող գործընթացները, գոյություն ունեցող տեսակետներն ու խնդիրները։

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Կ Ր ՈՐ Դ

ՀԱՅ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՀՀ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ

Այս գլուխը նվիրված է Հայաստանի և Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ հակասական նպատակների, գործընթացների և դրսևորումների մամուլում արտացոլման ուսումնասիրությանը, հայ-թուրքական տեղեկատվական պատերազմներին, մամուլի անդրադարձին հասարակական գործընթացների մեջ հայ-թուրքական մրցակցությանն ու հակամարտությանը։

Այս գլխի առաջին ենթագլխում՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԶԱՆՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ», բացահայտվում են այն խորքային պատճառները, որոնց հետևանքով, ըստ էության, կասեցվեց ֆուտբոլային դիվանագիտության ընթացքը։ «Թուրքիայի հետ հարաբերությունները նույնիսկ փոքր քայլերով հարթելու մեր անկեղծ առաջարկով սկսված գործընթացն արագ խափանվեց։ Իր հակասական կեցվածքով, իրարամերձ հայտարարություններով և գործընթացի անհիմն շահարկումներով Թուրքիան կործանեց այն։ Թուրքիան ետ կանգնեց իր պարտավորություններից և ոչ միայն չվավերացրեց ստորագրված արձանագրությունները, այլև վերադարձավ գործընթացից առաջ որդեգրած իր հին դիրքերին։ Նախապայմանների պատին դեմ առան մեր և գործընթացում ակտիվորեն ներգրավված մեր գործընկերների ջանքերը»⁶, - հայտարարեց ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը Կիպրոսի խորհրդարանում ունեցած իր ճառում 2011-ի հունվարին։ Վերլուծվում է մամուլի անդրադարձը Հայաստանի և Թուրքիայի դիրքորոշումների փոփոխությանը ֆուտբոլային դիվանագիտության ընթացքում։ Հատկապես ուշադրություն է դարձվում Թուրքիայի ժամապաշտական նկրտումներին, և բացահայտվում են թուրքական նեոսոսմանիզմի ծավալման ուղղությունները։

Որպես հայ-թուրքական հակասություն՝ նշվում է Թուրքիայի ներգրավվածությունը դարաբաղյան կոնֆլիկտում։ Հայ ժամանակակից մամուլը նշում է, որ իրականում Թուրքիան արցախյան կոնֆլիկտի չորրորդ կողմն է. 1990-ականներից նա աջակցեց Ադրբեջանին՝ այդտեղ ուղարկելով և՛ ռազմամթերք, և՛ զինուժ։ Երկրորդ՝ Թուրքիան սահմանի մոտեցրեց իր զորքերը, ինչն արդեն պատերազմի սպառնալիք էր։ Երրորդ՝ Թուրքիան սահմանը միակողմանի փակել է Հայաստանի հանդեպ, ընդ որում, դա արել է ամենադաժան ռեժիմով. անգամ հումանիտար բեռները երկրաշարժից տուժածների և փախստականների համար Թուրքիայի սահմանով չեն անցնում։ Այն դեպքում, երբ նույն Գազայի շրջանում, որը Թուրքիան փորձում էր խաղարկել և շահարկել, հումանիտար բեռներն անարգել անցնում են։ Եվ վերջապես,

⁶ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Կիպրոսի խորհրդարանում, www. President.am

Թուրքիան, որը Նախիջևանի երաշխավորներից մեկն է, դրդեց, որ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը պատերազմական գործողությունների մեջ մտնի Հայաստանի դեմ: Այսօր Թուրքիայի բոլոր շփումները, բոլոր քայլերը և ծրագրերը, որոնք կապված են Հայաստանի հետ, միանշանակ կապվում են Ղարաբաղի հետ: Այսինքն՝ Թուրքիան ղարաբաղյան կոնֆլիկտի չորրորդ մասնակիցն ու չորրորդ կողմն է:

Աշխատանքում ուսումնասիրվում են ռուս-թուրքական հարաբերությունների ընթացքի, ինչպես նաև Մերձավոր Արևելքում Թուրքիայի դերակատարության աճի արտացոլումը հայ ժամանակակից մամուլում:

Ինչ վերաբերում է ռուս-թուրքական հարաբերություններին, ապա դրանք ակտիվորեն զարգանում են հատկապես տնտեսական համագործակցության ոլորտում: «Ռուս-թուրքական մերձեցումը հետապնդում է միայն տնտեսական փոխշահավետ ձեռնարկումների նպատակ», - պնդում է թուրքագետ Ռ. Մելքոնյանը՝ ընդգծելով, որ ռուս-թուրքական քաղաքական մերձեցման հնարավորությունը շատ փոքր է, քանի որ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է⁷:

Թուրքիան կարևոր դեր է խաղում Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում տեղի ունեցող գործընթացներում: Մասնավորապես ակնհայտ է թուրքական հետքը 2011-ի հունվար-փետրվարից արաբական երկրներում տեղի ունեցող խռովություններում: «Թուրքիան փորձում է ստանձնել արաբական աշխարհի համախմբողի դերը», - նշում է թուրքագետ Ռ. Մելքոնյանը՝ հավաստիացնելով, որ վերջինիս ակտիվ արտաքին քաղաքականությունը Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում նպատակ ունի հաստատելու Թուրքիայի գերակայությունը, ամրապնդելու տնտեսական լծակներն արաբական աշխարհում:

Մամուլը շեշտում է, որ Թուրքիայի արտաքին քաղաքականության առանցքն են կազմում Հայոց ցեղասպանության ճանաչմանը հակազդելը, ինչպես նաև հայ ժողովրդի և Հայաստանի դեմ թշնամական գործողություններ կատարելը: Աշխատանքում բացահայտվում է, որ Թուրքիայի քաղաքական էլիտան իր մտածելակերպով ցեղասպանաստեղծ է երկրի ղեկավարները մտածում են՝ ինչպես կատարել նոր ցեղասպանություն հենց Հայաստանի, հայ ժողովրդի այս հատվածի հանդեպ առաջին իսկ հնարավորության դեպքում: Հայտնի է, որ գոյություն ունի հիմնավորված տեսություն ցեղասպան տիպի պետության մասին, ըստ որի՝ այդպիսի պետություն են կոչվում նրանք, որոնք ներունակ են մարդկության դեմ կատարելու ամենածանր հանցանքը՝ ցեղասպանությունը: Թուրքիայի ղեկավարության ցեղասպանաստեղծ մտածելակերպը արտահայտվում է նաև մշակութային ոլորտում: Դրա օրինակներից է Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանի հանձնարարությունը Ղարսում գտնվող հայ-թուրքական բարեկամության հուշարձանի քանդման վերաբերյալ, որին հայ ժամանակակից մամուլը մեծ տեղ է հատկացրել: Թուրքական քաղաքական ամբողջ վերնախավը վարակված է հակահայ, ռասիստական մտածելակերպով: Այստեղից նաև հետևում է, որ Թուրքիայի գրեթե ամբողջ հասարակությունը, բացառությամբ որոշակի նեղ հատվածների, ունի հայատյաց մտածելակերպ, որը գրեթե ոչնչով չի տարբերվում 20-րդ դարասկզբին թուրքական հասարակության մեջ տիրող մտածելակերպից: Հայաստանի հանդեպ Թուրքիայի քաղաքականությունն ունի մեկ հստակ արտահայտված առաձնահատկություն. դա ցանկացած իրավիճակ, իրա-

⁷ «Գլոսս Արմենիա» 19 մարտի, 2011:

դարձություն Հայաստանի դեմ օգտագործելն է: Հայ ժողովուրդը թյուրքական պետություններից՝ Թուրքիայից ու Ադրբեջանից, 20-րդ դարում տեսել է երեք ցեղասպանություն՝ 1905թ., 1915-23թթ. և 1990-ական թվականների ջարդերը: Հայ ազգը կորցրել է 1,5 մլն մարդ Թուրքիայում և ունեցել էլ 0,5 մլն զոհ՝ Ադրբեջանում: Ընդամենը 100 տարի առաջ հայերի հոծ բնակչությունը տարածվում էր Միջերկրական ծովից մինչև Կասպից ծով հատվածում: Ընդ որում, այդ տարածքների մեծ մասում հայերը կազմում էին բնիկ ազգաբնակչություն, իսկ որոշ տեղեր՝ բնակչության մեծամասնություն: Թուրքական ցեղասպան քաղաքականության արդյունքում ներկայումս հայերի բնակության տարածքները սահմանափակվում են Հայաստանի Հանրապետությանը, ԱԳՀ-ով և Վրաստանի որոշ շրջաններով: Բնականաբար, հայերը չեն կարող հանգիստ նայել այն բանին, որ Թուրքիան ու Ադրբեջանը շարունակում են ցեղասպան քաղաքականությունը և շարունակում են իրենց սպառնալիքները Հայաստանի դեմ: Թուրք վարչապետի հայտարարությունները դրա հերթական վկայությունն են: ՀՀ-ն գտնվում է 100 միլիոն թուրք-ադրբեջանական շրջափակման մեջ՝ 72 միլիոն Թուրքիան է, 9 մլն Ադրբեջանը, մոտ 10 միլիոն ադրբեջանցիներ էլ Կապում են Արևմտյան Իրանի տարածքում՝ հենց Հայաստանի սահմանին կպած: Այսինքն՝ մեր սահմանի հարակից տարածքների մոտ 90 տոկոսը բնակեցված է թյուրք տարրերով, որոնք ազդեցիվ են տրամադրված Հայաստանի հանդեպ:

Այս գլխի երկրորդ բաժինը կոչվում է՝ «ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՍՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ»: Այստեղ անդրադարձ է կատարվում դիվանագիտական եւ տեղեկատվական պատերազմների տեսությանը, ինչպես նաև ներկայացվում են այլ պետությունների միջև տեղեկատվական պատերազմների օրինակները:

Մեր ուսումնասիրության առանցքում է տեղեկատվական տեխնոլոգիաների, հատկապես համացանցի արագ զարգացումը, որը նպաստավոր պայմաններ ստեղծեց միջազգային էլեկտրոնային տեղեկատվության ոլորտում արմատական փոփոխություններ կատարելու և նոր մոտեցումներ մշակելու համար: Տեղեկատվությունն այսօր դարձել է այնքան կարևոր, որ նույնիսկ երբեմն փոխարինում է իրականությանը և ինքը դառնում իրականություն ձևավորող: Հաճախ առաջնային դեր է կատարում ոչ թե իրադարձությունը, այլ այն, թե ինչպես է դրա մասին մեզ տեղեկացվում հասարակությունը: Համաշխարհային տեղեկատվական դաշտը հատկապես դրա սոցիալական ցանցերի հատվածը գաղափարախոսական, քաղաքական և տնտեսական նպատակներով ակտիվորեն օգտագործում է ուղղորդված տեղեկատվությունն ու ապատեղեկատվությունը, որոնք տարբերակելը դժվար խնդիր է շարքային քաղաքացու համար:

Ժամանակակից փուլում տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության անմասնատեպ գլոբալ աճի պայմաններում այս ոլորտի անվտանգությունը դարձել է առանձին երկրների գոյատևման եւ անվտանգության հիմնական խնդիրը: Մեր կողմից ուսումնասիրվել է տեղեկատվական պատերազմների տեսությունը, որի սկզբը դրվեց ընդամենը երեք-չորս տասնամյակ առաջ, և որն այժմ ունի կիրառական մեծ նշանակություն: Այն հաշվի են առնում բազմաթիվ երկրներ տեղեկատվական անվտանգության համակարգի մշակման ժամանակ: «Տեղեկատվական պատերազմներ» եզրույթը առաջին անգամ օգտագործվել է 1976թ. ամերիկացի գիտնական, ֆիզիկոս Թոմաս Ռոնի կողմից «Բոինգ» ընկերության համար պատրաստված «Ջեմքի համակարգերը և տեղեկատվական պատերազմը» զեկույցում: Խնդրի մասն դրվածքը հետաքրքրեց ամերիկյան հատուկ ծառայություններին, և շատ շուտով պարզ

դարձավ, որ տեղեկատվությունը կարող է լինել ինչպես գեներ, այնպես էլ՝ քիրախ: Պաշտոնապես «տեղեկատվական պատերազմ» տերմինը շրջանառության մեջ է դրվել «Փոթորիկ ամապատում» գործողությունից հետո, երբ այն օգտագործվել է ԱՄՆ-ի պաշտպանության նախարարի հանձնարարականում 1992-ի դեկտեմբերի 21-ին⁸:

Տեղեկատվական պատերազմը նպատակամղված գործողություն է՝ հակառակորդի նկատմամբ տեղեկատվական գերակշռության հասնելու, նրա տեղեկատվական եւ այլ կենսական նշանակություն ունեցող կառույցները քայքայելու, շարքից հանելու, սեփական գաղափարները եւ նպատակները թշնամուն պարտադրելու, միաժամանակ, սեփական տեղեկատվություններից և տեղեկատվական կառույցները արտաքին և ներքին ազդեցություններից պաշտպանելու համար: Տեղեկատվական պատերազմներ եզրույթի ներքո ընկալվում է միջոցառումների մի համակարգ՝ հասարակական կարծիքի վրա ազդելու, մարդկանց վարքագիծը փոխելու, գաղափարներ եւ նպատակներ պարտադրելու և նմանատիպ գաղափարներից պաշտպանելու համար:

Տեղեկատվական պատերազմներում կարևորվում են հոգևոր-գաղափարական բնույթի գործոնները, որոնք իրենց արտացոլումն են գտել անցյալի և ներկայիս «գունավոր» հեղափոխություններում: Նույնիսկ կարելի է այնպես, որ վերջին տիպի հեղափոխությունները տեղեկատվական պատերազմների դասական օրինակներ են, երբ առանց ավանդական պատերազմներին բնորոշ ռազմական գործողությունների եւ մեթոդների դիմելու՝ ներագրող կողմը լուծում է իր առջև դրված աշխարհաքաղաքական, աշխարհագաղափարախոսական, կամ այլ բնույթի խնդիրները:

Տեղեկատվական դարաշրջանը փոխել է նույնիսկ ռազմական գործողություններն ու պատերազմները վարելու ձևերը, մեթոդները ու ուղիները: Տեղեկատվական պատերազմն ընդամենը միջոց է, այլ ոչ թե վերջնական նպատակ՝ այնպես, ինչպես, օրինակ, ռմբակոծությունը պատերազմի ընթացքում միջոց է նպատակին հասնելու համար, այլ ոչ թե նպատակ: Տեղեկատվական պատերազմը կարելի է օգտագործել որպես նախապատրաստական ու տակտիկական միջոց ռազմաստրատեգիական հարձակման կամ հակահարձակման համար: Տեղեկատվական պատերազմները ներառում են ոչ միայն տեղեկատվական հարձակումները, այլև տեղեկատվական պաշտպանությունը: Տեղեկատվական հակամարտության ճակատները օր օրի ավելի սպառնալից չափերի են հասնում և ավելի մեծ վտանգ են պարունակում, քան ռազմական գործողությունները: Տեղեկատվական հաղթանակը կարող է կախված լինել նրանից, թե հակամարտող կողմը որքան կկարողանա պաշտպանել իր քաղաքական, հոգեւոր, մտավորական, զինվորական էլիտային արտաքին, տեղեկատվական-հոգեբանական ներգործությունից, ներքին լսարանը գերծ կպահի թշնամու տարածած ապատեղեկատվությունից և ժամանակին տեղեկատվական հակահարված կտա թշնամու քարոզամեթոդային⁹:

Սովորաբար տեղեկատվական պատերազմը հանդիսանում է շարունակություն կամ նախերգանք սովորական պատերազմի, մշտապես ուղեկցում է իրական պատերազմը, հաճախ էլ մաս է կազմում դիվանագիտական պատերազմների: Ապատեղեկատվության հիմնական ազդեցությունը պետության բացասա-

կան իմիջի ձևավորումն է: Այս հարցում Հայաստանը ստիպված է պայքարել միաժամանակ երկու ճակատում՝ հայ-թուրքական և հայ-ադրբեջանական: Խոսելով Թուրքիայի կողմից Հայաստանի դեմ տեղեկատվական պատերազմի մասին՝ գալիս ենք եզրակացության, որ կարելի է մեջբերել Երրորդ ռեյխի քարոզչության նախարար Հեյդրիխի մեթոդը. «Ինչքան ավելի լկտի է սուտը, այնքան ավելի արագորեն է այն տարածվում»: Դեռ այն ժամանակ նրա նախարարությունը գաղտնի ուստիկանության հետ համատեղ անց էր կացրել փորձարկումներ բանբասանքների տարածման արագության ու բնույթի վերաբերյալ, որի արդյունքում Հեյդրիխը հրապարակել է իր մեթոդը: Թուրքական պրոպագանդան լավագույնս յուրացրել է Հեյդրիխի մի շարք կարգախոսները: Հայ-թուրքական տեղեկատվական պատերազմն ունի խոր արմատներ: Սակայն 20-րդ դարավերջում և հատկապես արդի փուլում տեղեկատվական դաշտում կտրուկ ակտիվացավ հայ-թուրքական հակամարտությունը: Բանն այն է, որ մի կողմից՝ անկախ Հայաստանի ձևավորումը, մյուս կողմից՝ տեղեկատվական նոր տեխնոլոգիաների առաջացումը խթանեցին տեղեկատվական պատերազմը: Ըստ քաղաքագետների՝ հայ-թուրքական բախումը ներկայումս մտել է նոր փուլ, որտեղ շեշտը դրվում է տեղեկատվական պատերազմի վրա:

Ուսումնասիրվել են նաև միջազգային մի շարք առաջատար փորձագետների տեսակետները հայ-թուրքական տեղեկատվական պատերազմի վերաբերյալ: Ըստ Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի քաղաքագիտության բաժնի քաղաքականության տեսության և փիլիսոփայության ամբիոնի վարիչ, փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր Կլեյմենտի Գուտորովի՝ «Տեղեկատվական հակամարտությունում Թուրքիան պարտվում է Հայաստանին, քանի որ չի կարող շահեկան վիճակում երկար գտնվել նա, ով ժխտում է ակնհայտ իրողությունները: Հայոց ցեղասպանության ակնհայտ իրողությունը ճանաչված է Արևելյան և Արևմտյան Եվրոպայում, Ռուսաստանում, Լատինական Ամերիկայի երկրներում, և դա իր ազդեցությունը թողնում է Թուրքիայի հետ հարաբերությունների վրա: Առայժմ զուտ լոկալ քաղաքական շահերի դրդապատճառներով պաշտոնական մակարդակով այդ ակնհայտ իրողությունը ժխտում են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Իսրայելը, սակայն նաև այդ երկրների վերնախավերն ու հանրությունը քաջատեղյակ են իրողությանը: Դրա վկայությունն են թեկուզ և անգամ այդ երկրների կառավարական բնույթի կայքէջերը»¹⁰:

Տեղեկատվական պատերազմի շրջանակներում հակամարտությունը ծավալվում է ինչպես Թուրքիայի և Հայաստանի տարածքներում, այնպես էլ երրորդ երկրների հասարակության նկատմամբ: Վերջին հանգամանքը մանրամասնորեն ուսումնասիրվում է սույն աշխատության մեջ: Երրորդ երկրներում ծավալված հայ-թուրքական տեղեկատվական պատերազմը նպատակ ունի այդ երկրների իշխանական համակարգն ու հասարակական կարծիքը տրամադրել հակամարտող կողմերի դիրքորոշումներին համահունչ: Հայաստանի խնդիրն է նպաստել Ցեղասպանության միջազգային ճանաչմանը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով, իսկ Թուրքիայի խնդիրն է կանխել այդ գործընթացը, Հայաստանը ներկայացնել որպես օկուպանտ Ադրբեջանի նկատմամբ: Տեղեկատվական պատերազմի ընթացքում կարևոր նշանակություն ունեն մշակութային միջոցառումները, որոնք ուղեկցվում են տեղեկատվական համապատասխան ապահովությամբ:

⁸ Гриняев С. Н., Информационная война: история, день сегодняшний и перспектива <http://infwar.ru/article.php?num=41>

⁹ Панарин И. Н., Технология информационной войны. М., 2003, с. 248.

¹⁰ «Հետաքննություն» N 18, 26.05.2011., ԹՈՒՐԻԻՒՆ ՊԱՐՏՎՈՒՄ Ե ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ:

Թուրքիայի տեղեկատվական պատերազմի նշանակետը ոչ միայն Հայաստանի և երրորդ երկրների հանրությունն է, այլ նաև հենց Թուրքիայի հասարակությունը, որին թուրքական քարոզչությունը փորձում է գերծ պահել Հայոց ցեղասպանության մասին այլընտրանքային կարծիք ունենալուց: Սակայն հենց Թուրքիայում տեղի են ունենում գործընթացներ, որոնք ուղղված են երկրի ներսում նոր մտածելակերպ ձևավորելուն: Ինչպես նշում է «Իրավունք» թերթը՝ «Թուրքիայի ներսում նույնպես ուժեղացել է Հայոց ցեղասպանության գործընթացը»: Ի դեպ, նույն թերթն այդ գործընթացն էլ ավելի խթանելու համար քարոզում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման անբեկանելիությունը. «Պարզ է, որ մինչև 2015թ. աշխարհում գրեթե չեն մնա երկրներ, որոնք չեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը»¹¹:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլուխը կոչվում է «ՀԱՅ-ԹՈՒՐԿԻԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՀԱՄԱԿՈՐՄԱՆ ԶԱՆՔԵՐՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԲԵՐՈՒԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ԳԵՐԸ ՀԱՄԱՐԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԾԻՔԻ ԶԵՎՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»: Այստեղ հիմնավորվում է, որ ֆուտբոլային դիվանագիտության մեկնարկից և ապա հայ-թուրքական փոխհարաբերությունների գործընթացի ճահճացումից հետո ձևավորվել է հայ-թուրքական միջպետական հարաբերությունների կարգավորումը՝ միաժամանակ միմյանց դեմ վարելով համատարած տեղեկատվական պատերազմ. թուրքական կողմը խոչընդոտում է գործընթացին՝ առաջ քաշելով Ղարաբաղի շուրջ իր նախապայմանները, Հայաստանը մեղադրելով Թուրքիային գործընթացը տապալելու մեջ՝ միաժամանակ շեշտադրումներ է կատարում Ցեղասպանության ճանաչման հարցի վրա՝ հայ-թուրքական փոխհարաբերությունների մեջ բարձրացնելով նաև առկա խնդիրների ամբողջ ցանկը: Արձանագրվում է, որ Թուրքիան փորձում է հայ-թուրքական գործընթացի տապալման մեջ մեղադրել հայկական կողմին՝ անգամ փորձելով ներկայացնել վիճակն այնպես, թե Հայաստանը գտնվում է օլիգարխների ճիրաններում, և վերջիններս, օգտագործելով իշխանությունների հետ ունեցած կապերը, վերահսկում են երկրի արտահանումն ու ներմուծումը: Մեկ այլ դեպքում թուրքական իշխանությունները հայ-թուրքական կարգավորման ձախողումը փորձում են բարդել ՀՀ իշխանությունների և անձամբ ՀՀ նախագահի վրա կամ ամբողջ մեղքը բարդել հայկական Սփյուռքի վրա: Ուսումնասիրվում է այն հանգամանքը, որ հայ-թուրքական շփումների ակտիվացումը խթանեց նաև Սփյուռքում նոր ազգային համակարգերի ձևավորումը:

Ատենախոսության մեջ նշվում է, որ Ցյուրիխյան արձանագրությունների վավերացման հիմնական ջատագովները մնում են ԱՄՆ-ը, Եվրոպան և որոշ չափով՝ Ռուսաստանը: Եթե Արևմուտքի համար հայ-թուրքական կարգավորումն ու սահմանի բացումը հնարավորություն են ստեղծում լրացուցիչ ազդեցության լծակներ ձեռք բերել Հայաստանի վրա, ինչպես նաև նախադրյալներ ստեղծել կասպյան նավթի ու գազի՝ Արևմուտք տեղափոխելու համար, ապա Ռուսաստանի համար հայ-թուրքական կարգավորումը հնարավորություն կստեղծի ավելի եռանդուն մտնել թուրքական էներգետիկ շուկա՝ միաժամանակ կանխելով Թուրքիայի ներգրավումը Արևմուտքի էներգետիկ սխեմաներում: Միաժամանակ հիմնավորվում է, որ քանի դեռ Թուրքիայում իշխանության են գտնվում իսլամիստական ուժերը, որոնք արտաքին քաղաքականության մեջ իրականացնում

¹¹ <http://www.yerkramas.org/2010/04/01/nakanune-24-aprelya-turciya-pribegaet-k-lyubym-metodam/> Арут Сасунян

են նեոսոցիալականության քաղաքականությունը, իսկ երկրի ներսում առաջնորդվում են ռասիստական գաղափարախոսությամբ, հայ-թուրքական հարաբերությունները չեն կարող գրանցել լուրջ առաջընթաց:

Ուսումնասիրվել է գործընթացի հասարակական ընկալման վրա ժամանակակից մամուլի ազդեցությունը: Այն հսկայական դեր ունի հայ-թուրքական փոխհարաբերությունների նկատմամբ հասարակական կարծիքի ձևավորման գործում: «Ես թերթերի և որոշ հեղինակների ազդեցության տակ էի: Հակառակ դեպքում ինչպե՞ս պետք է իմանայի Հրանտ Դինքին, ինչպե՞ս պետք է իմանայի «Ազոս»-ի մասին», - ասում է Սամասթ Օզյունը, որին Ստամբուլի դատարանը դատապարտեց մոտ 23 տարվա ազատազրկման թուրքահայ լրագրողի՝ Հրանտ Դինքի 2007-ի սպանության համար: Ըստ «Hürriyet Daily News» թերթի հուլիսի 25-ի համարում տպագրված հոդվածի՝ Սամասթը 17 տարեկան էր և գործազուրկ, երբ ապանել էր լրագրողին, ով հայերի վերաբերյալ Թուրքիայում իր հողվածներով զայրացրել էր ազգայնականներին: Սամասթը պաշտպանել է ինքն իրեն՝ ասելով, որ ստացել է աղքատ կրթություն և իրականացրել սպանությունն այլ մարդկանց ազդեցության տակ՝ նշում է թուրքական թերթը¹²: Հայ ժամանակակից մամուլում հայ-թուրքական փոխհարաբերությունների արտացոլումն անմիջապես ազդում է հասարակական կարծիքի ձևավորման վրա, որն իր հերթին՝ հետադարձ կապով ազդում է բուն գործընթացի վրա: Գնահատելով վերոհիշյալ ազդեցությունները՝ Արևմուտքը Հայաստանում ու Թուրքիայում իրականացնում է մի շարք ծրագրեր, որոնք նպատակաուղղված են մամուլի միջոցով հասարակական այնպիսի կարծիք ձևավորել հայ-թուրքական փոխհարաբերությունների վերաբերյալ, որը ձեռնառու կլինի Արևմուտքի խնդիրները լուծելու համար: Նման ծրագրերում շեշտը դրվում է հայ և թուրք հասարակությունների հաշտեցման վրա՝ առանց որևէ ակնարկի հայ ժողովրդի հանդեպ Թուրքիայում իրագործված Ցեղասպանության դատապարտման ու հայերի կրած վնասների հատուցման: Ոչ կառավարական բազմաթիվ կազմակերպություններ ֆինանսավորում են, այսպես կոչված, քաղաքացիական նախաձեռնությունները: Ինչպես ցույց է տալիս մեր ուսումնասիրությունը մամուլում ի հայտ եկած իրապարկումների վերլուծության վերաբերյալ, դրանք զգալիորեն ընդարձակեցին համապատասխան տեղեկատվական ընդհանուր հոսքում մինչ այդ առկա ավանդական թեմատիկան: Իրականացված բոլոր հետազոտությունների համեմատական վերլուծությունը վկայում է այն մասին, որ մինչև 2008-ը սկզբունքային տարբերություն կար հայկական ՁԼՄ-ներում՝ թուրքական, և թուրքական ՁԼՄ-ներում՝ հայկական թեմատիկային անդրադարձների միջև: Եթե Հայաստանում լուսաբանման ծավալով և մշտական հետաքրքրության առկայության տեսանկյունից Թուրքիան հաստատորեն գրավում էր առաջատար տեղերից մեկն արտասահմանյան երկրների շարքում, ապա հայկական թեմատիկան թուրքական եթերում և տպագիր ՁԼՄ-ների էջերում հայտնվում էր դեպքից դեպք: Այն ժամանակահատվածներում, երբ ակտիվանում էր Հայաստանի հետ կապված որևէ հարց՝ լինի դա Լեռնային Ղարաբաղի խնդրով ընթացող բանակցություններին վերաբերող նորություն, հայերի կողմից նշվող՝ Ցեղասպանության զոհերի հիշատակի մոտեցող օրվան կամ երրորդ երկրների խորհրդարանների կամ կառավարությունների օրակարգում Ցեղասպանության ճանաչման առնչվող հարց, «հայկական թեմատիկան» լայն քննարկման առարկա էր դառնում թուրքական ՁԼՄ-ներում: Սակայն իրատապ առիթի սպառնալու հետ Հայաստանն էլ երկար ժամանակով անհետանում էր թերթերի էջերից և եթերից: Միևնույն ժա-

¹² Տե՛ս «Hürriyet Daily News», 25 հուլիսի 2011:

մանակ, չնայած հայաստանյան ՁԼՍ-ներում «թուրքական» թեմայի մշտական առկայությանը, չի կարելի ասել, որ այն քաղաքական կարևորության առումով առաջնայություն է ունեցել ինչպես մամուլի, այնպես էլ լսարանի համար: Այդ մասին է վկայում մասնավորապես ԵՍԱ-ի «Ղարաբաղյան հիմնախնդիրը և հայ-թուրքական հարաբերությունները Հայաստանի քաղաքական գործիչների մախ-ընտրական ելույթներում» ուսումնասիրությունը: Այն իրականացվել էր 2007-ի խորհրդարանական ընտրությունների մախաշենին՝ ընդգրկելով քաղաքական տարբեր ուղղվածություն ունեցող առաջատար համերկային 7 թերթեր: Շուրջ երկու ամիս, երբ ընտրություններին մասնակցող քաղաքական գործիչները պետք է որ իրենց ընտրողներին համոզեին, որ իրենք լավագույնս կլուծեն երկրի առջև ծառայած խնդիրները, հայ-թուրքական հարաբերությունները կուսակցական դիրքորոշումների համատեքստում հիշատակվել էին ընդամենը 27 անգամ, ըստ որում՝ 4 անգամ դրանք եղել էին համառոտ հայտարարություններ: Այլ կերպ ասած՝ ուսումնասիրության թեման արծարծվել էր դիտարկված թերթերի 10 համարից մեկում միայն: Այդ հրապարակումներում առկա էր երկու երկրների միջև հարաբերությունների տարբեր կողմերի 66 հիշատակում: Առավել հաճախ՝ 16 անգամ, խոսվել էր դիվանագիտական և այլ պաշտոնական հարաբերություններ հաստատելու մասին, 15 անգամ՝ 1915 թվականին հայերի Ցեղասպանության, 10 անգամ՝ երկու երկրների ներքին ու արտաքին քաղաքականության վրա հայ-թուրքական հարաբերությունների ազդեցության, 7 անգամ՝ հայ-թուրքական սահմանի բացման մասին, և միայն մեկ անգամ էր հիշատակում եղել ժողովրդական (քաղաքացիական) դիվանագիտության և ուղիղ/բազմակողմ հանդիպումների մասին: Դիտարկված 7 թերթերի հրապարակումներում ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ իրենց դիրքորոշումներն էին արտահայտել մախընտրական պայքարի տարբեր փուլերին մասնակցած 25 կուսակցություններից ընդամենը 9-ը: Հայկական ՁԼՍ-ների անգամ թուցիկ դիտարկումը, սկսած 2008-ի կեսերից, երբ սկսվեց «Ֆուտբոլային դիվանագիտություն» կոչված գործընթացը, ցույց է տալիս, որ թերթերի հազվադեպ համարներում էին շրջանցվում հայ-թուրքական հարաբերությունների այս կամ այն կողմի մասին քաղաքական ուժերի դիրքորոշումների հիշատակումները: Այսպիսով, Հայաստանում ևս կարելի է խոսել վերջին տարում թուրքական թեմատիկայի նկատմամբ հայկական ՁԼՍ-ների վերաբերմունքի սկզբունքային տարբերության մասին:

Հայ-թուրքական հարաբերություններում քաղաքացիական մախաձեռնությունները կիրառվում են նաև մշակութային դաշտում՝ իրագործելով և ապա ՁԼՍ-ներում լուսաբանելով հայ-թուրքական տարբեր տեսակի մշակութային ջերմացման միջոցառումներ: Սեկ այլ թեմա, որտեղ հայկական մամուլը փորձում է ձևավորել հասարակական կարծիք, հայերի զբոսաշրջությունն է Թուրքիայում:

Ուսումնասիրվում է նաև մամուլի անդրադարձը հայ-թուրքական մրցակցությանը գիտական ասպարեզում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ ժամանակակից մամուլում (1990-2010) հայ-թուրքական փոխհարաբերությունների ուսումնասիրությունը բերում է հետևյալ եզրակացությունների.

1. Ըստ հայկական եւ համաշխարհային մամուլի վերլուծության, հայ-թուրքական փոխհարաբերությունները զարգանում են համաշխարհային քաղաքական և ֆինանսատնտեսական նոր համակարգերի ձևավորմանը զուգընթաց, որտեղ համաշխարհային տիրապետության համար պայքարի հետ

միասին գոյանում է բազմաբևեռ աշխարհ. Ռուսաստանն ԱՊՀ տարածքում ձգտում է ստեղծել իր կողմից վերահսկվող վերագոյային մակրոքաղաքական միավորում, իսկ որպես հիմնական համաշխարհային մարտահրավեր՝ դիտվելու է ռադիկալ իսլամի վտանգը:

2. Հայկական ժամանակակից մամուլը, այդ թվում՝ Սփյուռքի պարբերականները հանգում են այն եզրակացության, որ Հայաստանն իր աշխարհաքաղաքական դերը բարձրացնելու համար ունի հետևյալ յոթ գործոնները, որոնք նա պետք է հմտորեն գործադրի.

ա. հայ ժողովրդի հաղթանակը 1992-94թթ. Արցախյան պատերազմում և ԼՂՀ-ի ստեղծումը.

բ. Սփյուռքը.

գ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացն ու դրանից բխող Ցեղասպանության համար պատժի կիրառումը և հայոց կորուստների փոխհատուցումը,

դ. հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ լինելը.

ե. Քրիստոնեությունը և Հայ Առաքելական եկեղեցին.

զ. Հայաստանի միջնորդական հնարավորությունները.

է. Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը:

Ուսումնասիրելով միջազգային հարաբերությունների նոր համակարգի ձևավորման հատկանիշներն ու առանձնահատկություններն արդի փուլում և դրանցում հայ-թուրքական փոխհարաբերությունների գործընթացի ներգրավվածությունը՝ հանգում ենք այն եզրակացության, որ հայ-թուրքական գործընթացը փոփոխում է Հայաստանի և Թուրքիայի դերն ինչպես տարածաշրջանային աշխարհաքաղաքականության տեսակետից, այնպես էլ միջազգային հարաբերությունների համակարգում: Ընդ որում, գործընթացի ընթացքում Հայաստանը բարձրացնում է իր միջազգային կշիռը և հնարավորություն է ստանում լուծելու արտաքին քաղաքական ու ազգային մի շարք խնդիրներ:

3. Ինչպես 20-րդ դարի սկզբում՝ կոմունիստական իշխանության տարիներին, այնպես էլ արցախյան շարժումից և ապա անկախացումից հետո հայկական մամուլը թեև տարբեր համախաղանությամբ ու խորությամբ, սակայն մշտապես առաջնահերթ անդրադարձել է հայ-թուրքական փոխհարաբերություններին:

4. Հայ-թուրքական փոխհարաբերությունների գործընթացն ու նրա արտացոլումը հայ ժամանակակից մամուլում ազդում է Հայաստանի Հանրապետության և հայ հասարակության գործունեության անխտիր բոլոր ոլորտների վրա, անմիջապես ներգործում հայոց պետականության կենսագործունեության ու զարգացման վրա:

5. Հայ-թուրքական փոխհարաբերությունները մամուլում արտացոլելու տեսանկյունը կախված է այդ մամուլի միջոց քաղաքական կողմնորոշումից, իսկ Սփյուռքի մամուլի պարագայում՝ նաև մամուլի միջոցի գտնվելու վայրից, տվյալ երկրի կառավարության դիրքորոշումից: Հիմնական բախումը տեղի է ունենում ազգային պահպանողական և ծայրահեղ լիբերալ գաղափարախոսությունների միջև:

6. Հայ-թուրքական փոխհարաբերությունների ակտիվացման զուգընթացն աշխուժացնում է նաև հայ-թուրքական հարաբերությունների համապատկերին վերաբերող թեմաների արծարծման համախաղանությունը, խորանում է նաև վերոհիշյալ թեմաների ուսումնասիրության աստիճանը:

7. Ըստ հայկական ժամանակակից մամուլի, Հայաստանի և Թուրքիայի արտաքին քաղաքականությունն ինչպես միմյանց հանդեպ, այնպես էլ այլ ուղղություններով հիմնականում կրում է հակասական բնույթ, հետապնդում է իրարանքեժ նպատակներ: Մեր տարածաշրջանում տևական խաղաղության ու կայունության հաստատումը Հայաստանի գլխավոր նպատակներից է:

8. Հայկական ժամանակակից մամուլի ուսումնասիրությունը համգեցնում է այն եզրակացության, որ Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելու մեր նախաձեռնությունը չի նշանակում, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը մեզ համար երբևէ կարող էր դառնալ երկրորդական:

9. Թուրքիայի իշխող էլիտայի մտածելակերպն ու նպատակները մնացել են 20-րդ դարակզբի մակարդակի վրա, հետևաբար Թուրքիան ցեղասպանաստեղծ պետություն է, որի արտաքին քաղաքականությունը, այդ թվում՝ Հայաստանի հետ փոխհարաբերությունները նպատակաուղղված են ոչ միայն Ցեղասպանությունը հեքթելուն և Հայաստանի բռնակցված տարածքները պահպանելուն, այլ նաև ներկայիս Հայաստանի Հանրապետությունը թուլացնելուն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը բռնագրավելուն և թուրքալեզու պետությունների միություն ձևավորելուն՝ ակնհայտորեն այդ միությունում հեգեմոն դեր ստանձնելով: Այս եզրակացությունը բխում է ինչպես հայկական ժամանակակից մամուլում, այնպես էլ թուրքական, ռուսական պարբերականների ուսումնասիրությունից:

10. Հայ եւ արտասահմանյան ժամանակակից մամուլի ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ Թուրքիայի նեոօսմանականության ժավալապաշտական արտաքին քաղաքականության վեկտորները տարածվում են հետևյալ ուղղություններով.

ա) կովկասյան ուղղություն, որը ներառում է հարավկովկասյան երեք պետությունները, Ռուսաստանի հյուսիսկովկասյան մահմեդական հանրապետությունները, Աբխազիան և Իրանի հյուսիսարևմտյան Ադրբեջան նահանգը,

բ) միջինասիական ուղղությունը, որը ներառում է Ղազախստանն ու միջինասիական թուրքալեզու պետությունները, ընդհուպ Հինաստանի արևմուտքում ույզբուրների թուրքալեզու ցեղախմբով բնակեցված տարածքները,

գ) սլավոնական ուղղությունը, որը ներառում է Ուկրաինական Ղրիմը, Ռուսաստանի Պոլովոժիեի թուրքալեզու հանրապետությունները, ինչպես նաև Ուրալի ու Սիբիրի թուրքալեզու ժողովուրդները,

դ) մերձարևելյան և հյուսիսաֆրիկյան ուղղությունը, որը ներառում է այդ ըստ էության տարածաշրջանի արաբական բոլոր պետությունները, ինչպես նաև իսլամ դավանող աֆրիկական պետություններն ու ցեղախմբերը,

ե) եվրոպական ուղղությունը, որը ներառում է Ալբանիան, Կոսովոն, Բոսնիայի ու Հերցեգովինայի մահմեդական բաղկացուցիչ մասերը, Բուլղարիայի հարավի և Հունաստանի հյուսիս-արևելքի թուրքական բնակչությունը, Հյուսիսային Կիպրոսը, ինչպես նաև Գերմանիայի և արևմտաեվրոպական այլ երկրների թուրքական գաղթօջախները:

11. Հայկական ժամանակակից մամուլն ինչպես Հայրենիքում, այնպես էլ Ափյուռքում, ինչպես հայալեզու, այնպես էլ օտարալեզու, ինչպես իշխանամետ, այնպես էլ չեզոք ու ընդդիմադիր օբյեկտիվորեն ներկայացնում են հայ հասարակության կարծիքը, որն ընդհանրացնելով կարելի է ներկայացնել որպես հայ ժողովրդի ընդհանուր կամքը և ազգային գաղափարախոսությունը՝ վերականգնելու պատմական արդարությունը, ճանաչելու Հայոց ցեղասպանությունը համաշխարհային մակարդակով, պատիժ սահմանելու դրա համար և ազատագրելու հայոց տարածքները թուրքական բռնագավթումից: Հետևաբար, պետա-

կան ու քաղաքական այն գործիչները, որոնց գործունեությունը կհակասի այս իղծերին, չեն ունենա հասարակական աջակցություն հայ ժողովրդի և ոչ մի հատվածի մոտ:

12. Թուրքիան, իր ԶԼՄ-ների գործադրմամբ, փորձում է հայ-թուրքական գործընթացի տապալման համար մեղադրել հայկական կողմին՝ ընդ որում մեղադրանքներ ներկայացնելով մեկ ՀՀ իշխանություններին և անձամբ ՀՀ մախագահին, մեկ Ափյուռքին կամ էլ՝ Հայաստանի օլիգարխներին: Մեղադրանքների համար այսպիսի տարաբնույթ հասցեատերերին ներկայացնելը վկայում է թուրքական դիրքորոշման անհիմն ու մտացածին լինելու մասին:

13. Ափյուռքի մամուլի վերլուծությունը ցույց է տալիս, որ հայ-թուրքական շփումների ակտիվացումը, Ափյուռքի և Հայաստանի միջև տեսակետներում տարբերություն փնտրելու ձգտումը հայ-թուրքական գործընթացում ձախողման համար Ափյուռքին մեղադրելու թուրքական իշխանությունների քաղաքականությունը խթանեցին նաև Ափյուռքում նոր համակարգերի ձևավորումը, որոնց խնդիրն է համակարգված գարգացում տալ արևմտահայության պահանջատիրությանը:

14. Հայ ժամանակակից մամուլում Տյուրիխյան արձանագրությունների վավերացման թեմային անդրադարձերը վկայում են, որ դրա հիմնական ջատագովները մնում են ԱՄՆ-ն, Եվրոպան և որոշ չափով՝ Ռուսաստանը:

15. Հայ ժամանակակից մամուլում Թուրքիայի իշխանությունների վերաբերյալ անդրադարձերի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս առումով դոմինանտ է հետեյալ կարծիքը. քանի դեռ Թուրքիայում իշխանության են գտնվում իսլամիստական ուժերը, որոնք արտաքին քաղաքականության մեջ իրականացնում են նեոօսմանականության քաղաքականությունը, իսկ երկրի ներսում առաջնորդվում են ռասիստական գաղափարախոսությամբ, հայ-թուրքական հարաբերությունները չեն կարող գրանցել լուրջ առաջընթաց:

16. Գործընթացի հասարակական ընկալման վրա մեծ է հայ ժամանակակից մամուլի ազդեցությունը, հետևաբար շահագրգիռ կողմերը միջոցներ են ձեռնարկում մամուլի վրա իրենց նպատակներին համապատասխան ազդեցություն գործադրելու համար:

17. Հայ-թուրքական հարաբերություններում մեծ կիրառում է ստացել քաղաքացիական նախաձեռնությունների օգտագործումը, որը կիրառվում է ԶԼՄ-ներում և մշակութային դաշտում:

18. Հասարակական հարաբերությունների մի շարք ոլորտներում հայկական մամուլը փորձում է ձևավորել հասարակական կարծիք. դա հայերի զբոսաշրջությունն է Թուրքիայում, մշակութային, տնտեսական, առևտրային և այլ բնույթի հարաբերությունները Թուրքիայի հետ:

19. Հայկական մամուլը հասարակության վրա փորձում էր ազդել մի կողմից՝ ձևավորելով դրական ընկալում ֆուտբոլային դիվանագիտության հանդեպ, մյուս կողմից՝ ընդդիմադիր մամուլի կողմից փորձեր էին կատարվում հասարակությանը դեմ տրամադրել իշխանությունների նախաձեռնած քաղաքական գործընթացին:

20. Կարգավորման գործընթացի սկզբնական փուլում թուրքական մամուլը փորձում էր ձևավորել դրական մթնոլորտ Գյուլիի՝ Հայաստան այցելելու հարցի շուրջ, սակայն հետզհետե ավելի ու ավելի շեղվեց դեպի հակահայկական դիրքորոշում, իսկ վերջին շրջանում ծայնակցելով Թուրքիայի իշխանություններին՝ ստանձնեց ռասիստական տեսակետների քարոզչի դերը:

21. Գիտական ասպարեզում տեղի է ունենում անզիջում պայքար հայերի ու թուրքերի միջև, որը իր անմիջական արտացոլումն է ստանում ինչպես հայկական, այնպես էլ օտար մամուլի էջերում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ԳՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՈՂՎԱԾՆԵՐ

1. «Միջուկային զենքի չտարածման հարցը պետք է զուգակցվի փոքր երկրների երաշխիքներով» (Գիտական հոդված) Հայ-ռուսական (Մլավոնական) համալսարան, 4-րդ տարեկան գիտական կոնֆերանս, 30 նոյեմբեր-4 դեկտեմբեր, Երևան, ՀՌՀ հրատարակչություն 2009, էջ 341-345:

2. "Наброски о внешней политики Армении», научная статья Международной молодежной летней конференции молодых исследователей», Сборник статей, Цахкодзор 2009, стр. 209-214.

3. "Противоречивые тенденции во внешней политике Армении и Турции и их отображение в прессе", научная статья. Международная конференция "Армяно-турецкие отношения, их влияние на развитие региона и отображение в прессе" 25-26 апреля 2011 г., Сборник научных статей, Ереван, Издательство РАУ 2011, стр. 45-52.

Бабуханян Гайк Борисович

«Армяно-турецкие взаимоотношения в современной армянской прессе (1990-2010гг.). Критический анализ»

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.06 «Журналистика».

Защита состоится 29 февраля 2012 г. в 14:30 на заседании специализированного совета ВАК 012, действующего при ЕГУ, по адресу г. Ереван, ул. Хачатуря Абовяна 52/А, ЕГУ, корпус филологического факультета, аудитория 202.

Резюме

Диссертация посвящена исследованию освещения в армянской современной прессе армяно-турецких отношений, основных направлений и противоречий во внешней политике Турции и Армении, а также процессу формирования нового мирового порядка, роли и месту Армении в новом мироустройстве. Подробному рассмотрению подвергнута деятельность СМИ Армении, тенденции их развития в условиях формирования нового информационного поля, в котором представлены как традиционные СМИ (газеты, телевидение, радио, информационные агентства), так и новейшие медиа (онлайн-агентства, социальные сети и др.). Исследуется информационная война, в частности, участие средств массовой информации Армении и Диаспоры в армяно-турецком информационном противостоянии; манипулятивные и дезинформирующие методы и механизмы, применяемые противником; осуществляемые со стороны государства и СМИ шаги, направленные на обеспечение информационной безопасности общества; кибервойны; использование возможностей Интернета в информационных войнах.

Во Введении обосновывается выбор темы, ее актуальность, научная новизна, обозначаются цели исследования. В частности, указываются задачи исследования, а именно - анализ роли армянских современных средств массовой информации в формировании общественного мнения по вопросу армяно-турецких взаимоотношений, а также в информационной войне, методологические основы и тенденции в освещении событий, являющихся частью процесса «футбольной дипломатии». Представлена также теоретическая и методологическая основа работы.

Первая глава диссертации, состоящая из трех частей и озаглавленная "Роль и значение Республики Армения в Южнокавказском регионе", посвящена в первую очередь общемировым тенденциям развития, и в частности трансформациям на постсоветском пространстве, которые ведут к воссозданию многополярного мира.

Во второй части главы рассмотрены такие вопросы, как армяно-азербайджанское и армяно-турецкое противостояние; роль Армении в новой системе международных отношений. Выявлены те приоритетные направления, которые позволят Армении укрепить свои позиции в мире при решении региональных проблем. Изучаются отношения Турции с соседними государствами, а также со странами тюркского мира; пантюркистская и неосманистская политика Турции; курдский фактор; внутривосточная

ситуация в самой Турции. Рассматривается влияние инициативной политики Армении на ситуацию в Турции, Азербайджане и Грузии и на геополитический расклад в регионе, а также на развитие отношений метрополии с армянской диаспорой.

В третьей части данной главы изучается пресса Армении в плоскости освещения армяно-турецких взаимоотношений, как в начале 20-го века и советские годы, так и во времена независимости. Проводятся параллели между данными временными отрезками в плане освещения армянской прессой вышеуказанных процессов. Подробно рассматривается деятельность армянской прессы в период с 1990 по 2010гг. Проводится сравнительный анализ проправительственной, нейтральной и оппозиционной прессы. Исследуется также русскоязычная пресса Армении, а также пресса Спюрка, по территориальному и партийному признакам. Анализируется влияние исторического отрезка, конкретных событий и уровня активности армяно-турецких взаимоотношений на тематику и частоту публикаций по данной проблеме.

Вторая глава диссертации ("Противоречивые процессы в армяно-турецких взаимоотношениях и их отражение в прессе РА ") включает в себя 3 подзаголовка. Первая часть главы посвящена в основном армяно-турецкому геополитическому противостоянию. Раскрывается суть турецкой захватнической политики и приводятся основные направления ее притязаний. Обосновывается геноцидогенная сущность мышления турецкой политической элиты. Вторая часть главы посвящена армяно-турецкой информационной войне, особенно в контексте подписания в 2008 году в Цюрихе протоколов, направленных на нормализацию отношений между двумя странами. Подробно рассмотрено освещение турецкими СМИ так называемой "футбольной дипломатии", восстановление исторической армянской церкви на острове Ахтамар и другие примеры. Представлены история возникновения самого термина "информационная война", а также зарубежный опыт проведения информационных операций. Подробно представлены возможности использования всемирной сети для проведения информационных атак и специальных пропагандистских операций. Представлены виды информационных войн, влияние информации и дезинформации на формирование имиджа государства, использование манипулятивных методов воздействия на аудиторию СМИ, усилия многих государств мира, направленные на обеспечение информационной безопасности своего общества. Особое внимание уделено концепции информационной безопасности Армении, в которой отмечены те информационные угрозы и вызовы, предотвращение и нейтрализация которых имеют стратегическое значение для государства. Рассмотрены механизмы обеспечения информационной безопасности.

В третьей части изучается влияние СМИ на общественное восприятие процесса развития армяно - турецких отношений, а также создание структур, направленных на обеспечение продолжения процесса нормализации отношений. В частности, рассматривается реакция прессы на гражданские инициативы в сфере журналистики, искусства и культуры, развития туризма. Особое внимание уделяется изучению противостояния в научном сообществе.

В заключении излагаются основные выводы, полученные в ходе исследования темы, и вытекающие из них предложения.

В конце диссертации прилагается список использованной литературы.

Hayk Babukhanyan

“Armenian-Turkish Relation-ships in Modern Armenian Press of 1990-2010. Critical Analysis”

Philology PHD thesis, specialty 10.01.06 “Journalism”

Defense day: February 29, 2012, 14:30 pm at the session of the VAK Specialized Council (High Attestation Commission) 012 under the Yerevan State University. Address: Yerevan, 52/A Abovyan str., YSU, Faculty of Philology, room N 202.

The thesis is a research of the coverage of Armenian-Turkish relations in modern Armenian Press, the main directions and contradictions in foreign Policies of both Armenia And Turkey, as well as the processes of formation of the new world-order and particularly Armenia’s role in this new world order.

The activity of Armenia’s mass-media, the tendencies of its development within the frame work of formation of a new informational field, where both the traditional (newspaper, radio, informatioan agencies) and the latest mass media forms (on-line agencies, social sites) , are under detailed consideration in the following thesis. The latter also focuses on informational war, especially the Diasphora mass-media forms in Armenian-Turkish resist; the use of manipulative and mis-informing methods used by the opponent; measures taken by the state and state organs as well as mess-media aiming at informational security of the society; ciber wars; use of the Internet and its possibilities in such informational wars.

The Introduction considers the reasons for choosing this topoiс particularly and its actuality, scientific novelty and the aims of the research as well. In particular the role of modern Armenian mass-media informatioan of a social opinion concering Armenian-Turkish relations, informational wars, methodological basis and tendencies in the coverage of events being insparable part of the process called “football diplomacy” are under the focus. Hereby a special reference is made to the methodological and theoretical basis of the research work.

The first chapter of the following thesis consisting of 3 parts and entiteles “The Role and Importance of the South-Caucasian Region” is dedicated to the world development tendencies and particularly to the transformations in the post-soviet territory which lead to re-creation of a multi-polar world.

The second part of the chapter refers to the issues of Armenia-Azerbaijan and Armenia-Turkey conflicts and resist; the role of Armenia in the new system of international relations. The author reveals the prior directions which will enable Armenia to strengthen its position in the world in the process of settlement of regional problems. The chapter focuses on the relations of Turkey with its neighbouring countries, with the Turkish world, Panturkish and Neo-osmanic policy of the country, Kurdish factor and inner-political situation within the country as well. The influence of initiative Armenian policy on situation in Turkey, Azerbaijan and Georgia and on the geo-political situation in the region; as well as on the development of relations of the mother-country with the Diasphora are nder detailed consideration.

The third part of the following chapter refers to the Armenian mass-media in view of the coverage of Armenia-Turkey relationships at the beginning of the XX century, Soviet Era and the Independence Period.

The activity of the mass-media is compared within all the above mentioned time-periods in teh frame work of the coverage of the events in the corresponding time-periods. Their activity from 1990-2010 is also referred to. Comparative analysis of pro-government, neutral and oppositional press has been carried out too. The Russian press as well as the press of the Diasphora are studied in awar-kance with their territorial and party membership features. The influence of certain historic periods certain events and level of activity of Armenia-Turkey relations on the themes and frequency of published work have been considered.

The Second chapter of the thesis entiteled as “Contradictory Processes in Armenian-Turkish Relations and their Reflection in the Press of the Republic of Armenia consists of three subtitles. The first part of the chapter mainly refers to Armenian-Turkish geopolitical opposition. The conquering nature of the turkish policy with the main directions and demands of the latter are revealed and the author also gives proof of the genocidal essence of Turkish mentality and of the political elite in particular.

The Second part of the chapter refers to Armenian-Turkish informational war particularly within the context of signing of protocols in the year of 2008. Here the coverage of the so-called “football diplomacy” by the Turkish mass-media is under special consideration, as well as restoration of the historic Armenian church on the island of Akhtamar and some other examples. The chapetr refers to the origin of the term “informational war” as well as foreign experience in the execution of inforamtional operations. This part also refers to the opportunities of the use of internet for informational attacks and special propaganda operations. Hereby forms of informational wars, influence of informationa and misinformation on the reputation of a country, use of manipulative methods on the auditorium, as well as efforts made by many countries to ensure informational security of their societies are illustrated. Special attention is paid to informational security of Armenia, with the focus on the concepts of informational security of Armenia and hereby informational threatens and challenges, the neutralization and prevention of which are of strategical importance for the country, are outlined . Methods aiming at ensuring informational security are considered as well.

The third part focuses on the influence of mass-media on social comprehension of the process of the development of Armenian-Turkish relations, as well as on creation of structures aiming at ensuring continuity of normaliztion processes of the relations. The reaction of mass-media to civil initiatives in the spheres of journalism, art and culture, development of tourism. Special attention is drawn to the resist in scientific sphere.

The conclusion focuses on the basic conclusions drawn from the research and suggestions there upon.

The literature is attached.